

ԳՐԻԳՈՐԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲՈՒՆԻԱԹՅԱՆ

ՔԱՐՈԶ

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, ամէն»:

«Այլ ինձ քաւ լիցի պարծել, բայց միայն ի խաչն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» (Գաղ. Զ 14):

Այսօրվա սուրբ գրական ընթերցվածից վերցված մի խոսք է սա, սիրելի հավատացյալներ, որ Պողոս առաքյալն է ասել, որպես քրիստոնյա արտահայտելու համար իր անձնական կեցվածքը հավատքի և մարդկային վերաբերմունքների նկատմամբ, ինչպես նաև տալու համար բոլոր քրիստոնյա հավատացյալներին մի ուղեցույց՝ այդ կերպ արտահայտելու իրենց հավատքը և ապրելու իրենց քրիստոնյայի արժանի կյանքով: Եվ այս գաղափարը որքան գեղեցիկ է հնչում այսօր՝ Խաչվերացի այս մեծ տոնի օրը:

Խաչի տոնին հավատացյալների համար մեկ անգամ ևս ընդգծվում է Խաչի գաղափարը, նրա նշանակությունը, նրա դերը և տեղը քրիստոնյա Եկեղեցու մեջ և հավատացյալի կյանքում: Խաչի հիմնական նշանակությունը ըմբռնելու և հասկանալու համար, սիրելի հավատացյալներ, պետք է ընթերցենք Ավետարանը, ծանոթանանք Քրիստոսի կյանքին: Աստվածային նախախնամությամբ տնօրինված էր, որ Աստուծո միակ Որդին՝ Հիսուս Քրիստոս՝ աշխարհի փրկիչը, գար, մարդկանց հետ բնակվեր՝ նրանց սովորեցնելու ճշմարիտ ապրելու կերպը և եղանակը և, ի վերջո, Իր արյունը թափելու՝ մարդկության փրկության համար: Հիսուս, լինելով Աստուծո Որդի և Աստված, Իր կյանքը զոհաբերեց հավատացյալների և մարդկանց փրկության համար. խաչափայտի վրա խաչվեց: Խաչով մահապատիժը Հռոմեական կայսրության մեջ մահապատժի ընդունված ձևերից մեկն էր. ամենահասարակ դատապարտյալ մարդկանց մահապատժի ենթարկելու միջոցն էր այն: Ապնվականները, կինվորականները, մեծահարուստները, իմաստունները եթե հանցանք գործեին, այլ մահապատժի ձևեր էին կիրառվում նրանց նկատմամբ:

Այսպիսով Քրիստոս Իր համեստությամբ, Իր խոնարհությամբ անձնական օրինակ տրվեց, որով մի տեսակ նաև հրավեր և պատգամ կարդաց մեզ՝ Իր հետևորդներին՝ քրիստոնյա հավատացյալներիս, կյանքի բոլոր երևույթների առջև ու նկատմամբ լինելու խոնարհ ու համեստ, նաև զոհաբերվել ընկերությունների համար, հավատամքի համար ճիշտ Իր օրինակով, ինչպես որ Ինքը Իր քարոզած ճշմարտություններին հավատարիմ մնալով՝ Իր կյանքը զոհաբերեց: Քրիստո-

նական Եկեղեցին իր պատմության առաջին իսկ օրից Խաչի մեջ բպմաթիվ իմաստներ է խտացրել և տևապես քարոզել, որպեսզի այդ գաղափարները Խաչի հետևորդները ջանան իրագործել իրենց կյանքի մեջ, որպեսզի նկատվեն իսկապես ճշմարիտ քրիստոնյա: Մեր Եկեղեցին ևս միշտ կարևոր նշանակություն է ընծայել Խաչի իմաստին և նրա խորհուրդին: Խաչը հայ հավատացյալի համար առաջին հերթին իր հավատքի վրա հաստատ մնալու իրողություն է, ապա հավատարմություն իր ընբռնած ճշմարտություններին, իր Եկեղեցուն, իր հավատամքին: Ի վերջո, սիրելի հավատացյալներ, հայ հավատացյալի համար գերագույն կոհաբերության, զոհողության նշանակություն ունի Խաչը իր իմաստով: Խտացնելով այս բոլորը ի մի, իբրև հավատացյալ տեսնելով Խաչի մեջ խոնարհության, համեստության, անձնազոհության և այլ տեսակ մարդկային առաքինությունների խտացումը, մենք, իբրև ներկա ժամանակների մեջ ապրող հավատացյալներ, պարտավոր ենք, պետք է հետևենք նույն օրինակին՝ Քրիստոսի կյանքի օրինակին, մեր նախահայրերի օրինակին, հավատարիմ մնալ մեր հայրերի հավատքին և ավանդություններին: Խաչը եթե մենք ընբռնում ենք իբրև խոնարհության նշան, դա չի նշանակում, որ կյանքի մեջ կրավորականության ենք հրավիրում: Ո՛չ երբեք: Քրիստոնյան իր խոնարհությամբ, համեստությամբ, առաքինություններով շատ ավելի ուժեղ կեցվածք կարող է ցուցաբերել կյանքի որևէ երևույթի նկատմամբ, լուծում պահանջել: Գիտեք, որ Քրիստոս խոնարհ է, համեստ, մարդասեր: Բայց ամեն անգամ, երբ հարկ է լինում վճռական լինել, Նա ամենավճռականն է, ամենաքաջ և արի կեցվածքն է որդեգրում և ամենաճիշտ պատասխան է տալիս ու դիրք ճշտում այս կամ այն հարցի նկատմամբ:

Ինչպես ամեն տեղ, թե՛ Հայաստանում և թե՛ Սփյուռքում, հայ հավատացյալ ժողովուրդը հավատարիմ է Խաչի ճշմարտություններին, դրա համար կորովոր է մեր Եկեղեցին: Ես գալիս եմ հեռու տեղից և ուզում եմ բերել այդ վկայությունը: Ձեր քույրերն ու եղբայրները՝ հայեր, ապրում են Սփյուռքի գանական երկրների մեջ, ինչպես նաև Արգենտինայում, որտեղից ես գալիս եմ պատգամավորների հետ միասին՝ մասնակցելու համար մեր Վեհափառ Հայրապետի՝ Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի գահակալության տարեդարձի տոնակատարությանը: Բերում եմ ահա վկայությունը, սիրելի Հայաստանի ժողովուրդ, որ ձեր եղբայրներն ու քույրերը հեռավոր Արգենտինայում հավատարիմ են Խաչի նշանակությանը, Խաչի խորհրդին, հավատում են Խաչի զորությանը, Հայրենիքի հորդառատ ուժին և այդ հեռավոր երկրում բարձր են պահում մեր ժողովրդի պատիվը, ապրելով իբրև արժանավայել քրիստոնյաներ և հայեր: Ձեր հայրենակիցները հրճվում են, իմանալով, որ ծաղկյալ է հայոց վերածնված Մայր Հայրենիքը, Հայ Եկեղեցին, կանգուն է Հայ Եկեղեցու կենտրոնը՝ մեր Սրբազնասուրբ Էջմիածինը: Ուրեմն, թող այսօրվա սրբազան այս տոնը մեզ նոր ներշնչումներ պարգևի՝ մնալու համար հավատարիմ մեր անցյալին, մեր սրբություններին, մեր Հայաստանի արդի նվաճումներին, մեր երազանքներին, դրանք կենսագործելու կյանքում: Ջանանք մեր աշխատանքի բաժինը բերել աշխարհը հուզող հարցերի լուծման ճիգերին, ի մասնավորի աշխարհի խաղաղության ի խնդիր:

Թող Աստված առատապես մեր վրա տարածի Սուրբ Խաչի զորությունը՝ ստանալու համար այդ զորությունից նոր շնորհներ, նոր ներշնչանքներ, կարողանալ ապրելու մեր կյանքը իբրև քրիստոնյաներ և հայեր, բայց նախ՝ հավատացյալներ: Թող Աստված օրհնի ձեզ և ձեզ շնորհի Իր պարգևները, այժմ և հավիտյանս հավիտենից, ամեն: